ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ՝ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԸՆՏՐՎԱԾ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏ

Մինչև համայնքի ղեկավարի ընտրվելը ավագանու նիստը վարում է ավագանու նիստին ներկա տարիքով ավագ անդամը, որը Մուշեղ Թորգոմի Մկրտչյանն է:Նրա առաջարկությամբ մեկ րոպե լռությամբ հարգանքի տուրք մատուցվեց 44-օրյա պատերազմի զոհերի հիշատակին:Նիստը վարողի ներկայացմամբ նորընտիր ավագանու 27 անդամներից առաջին նիստին գրանցվել են 27 ավագանու անդամներ, ներկա են 27-ը: Համաձայն ՀՀ թիվ 33 տարածքային ընտրական հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 36-Ա որոշման ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու մանդատները բաշխվել են հետևյալ կերպ՝

<<Ապրելու երկիր>> կուսակցություն 1 մանդատ,
<<Հայ յեղափոխական դաշնակցություն>> կուսակցություն 2 մանդատ,
<<Ազատական>> կուսակցություն 3 մանդատ,
<<Հանուն Հանրապետության ԺՊԴ>> կուսակցություն 4 մանդատ,
<<Միասնական Արթիկ>> դաշինք 6 մանդատ,
<<Քաղաքացիական պայմանագիր>> կուսակցություն 11 մանդատ:

Նիստը վարողը ներկայացրեց համամասնական կարգով ընտրված ավագանու անդամների անուն ազգանունները և կուսակցական պատկանելիությունները և մինչև օրակարգային հարցերին անցնելը տեղեկացրեց, որ համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 1-ին մասի՝ ավագանու խմբակցությունները ստեղծվում են նորընտիր ավագանու առաջին նստաշրջանի բացման օրը՝ հետևյալ սկզբունքին համապատասխան.

Ավագանու անդամների մանդատների բաշխմանը մասնակցած կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի առաջադրմամբ ընտրված ավագանու անդամներն ընդգրկվում են նույնանուն խմբակցություններում, որոնք ըստ նիստը վարողի արդեն ստեղծվել են, որին առարկեց ավագանու անդամ Ոսկան Վարդանյանը հարցնելով, թե երբ են ստեղծվել, ինչին նիստը վարողը ասաց, որ դա օրենքի պահանջն է:Ոսկան Վարդանյանը շարունակեց՝

- Օրենքի պահանջն է, բայց չենք կարող ասել ստեղծվել են թե՞ ոչ:

Նիստը վարողը շարունակեց.

ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու կազմում գործելու են թվով 6 խմբակցություններ, դրանք են՝

<<Ապրելու երկիր>> կուսակցություն խմբակցություն
<<Հայ յեղափոխական դաշնակցություն>> կուսակցություն խմբակցություն
<<Ազատական>> կուսակցություն խմբակցություն
<<Հանուն Հանրապետության ԺՊԴ>> կուսակցություն խմբակցություն
<<Միասնական Արթիկ>> դաշինք խմբակցություն
<<Քաղաքացիական պայմանագիր>> կուսակցություն խմբակցություն

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասի՝ խմբակցությունը համայնքի ղեկավարին գրավոր ներկայացնում է իր կանոնադրությունը, անվանումը, կազմը, ղեկավարի և քարտուղարի անունները, ազգանունները, որոնք նիստը վարողը հրապարակում է ավագանու առաջիկա նիստում:

Նաև տեղեկացնում եմ, որ ավագանու նիստերի դահլիճում ավագանու խմբակցություններին հատկացվում են առանձին հատվածներ:

Այնուհետև նիստը վարողը ներկայացրեց առաջին նիստի օրակարգը.

Օրակարգում ներառված են 4 հարց.

1. Ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի ստեղծում,

2. ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի ընտրություն,
3. ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի երդման արարողության հետ կապված կազմակերպչական հարցեր,
4. ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրվա սահմանում:

Օրակարգի նախագիծը դրվեց քվեարկության և ընդունվեց:

Քվեարկությամբ ընդունվեց օրակարգի նախագիծը՝ 27 կողմ ձայնով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 20-ի առաջին նիստի օրակարգը.

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ նիստը վարողը նշեց, որ ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովը ստեղծվում է խմբակցությունների կողմից ներկայացված թեկնածուներից:

Մինչև թեկնածուների առաջադրումը <<Միասնական Արթիկ>> դաշինքի կողմից ավագանու անդամ ընտրված Ոսկան Վարդանյանը առարկություն ներկայացրեց վարման կարգի վերաբերյալ, նշելով որ համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի և <<Ընտրական օրենսգրքի>> ՀՀ օրենքի 142-րդ հոդվածի 2-րդ մասով մինչև համայնքի ղեկավարի ընտրության կարգը, որ միայն ավագանու խմբակցությունները կարող են իրենց կուսակցությունների (կուսակցությունների դաշինքի) թեկնածուների ցուցակի առաջին հորիզոնականում տեղ զբաղեցրած անձին առաջադրել որպես համայնքի ղեկավարի թեկնածու, իսկ համաձայն օրենքի, ավագանու խմբակցության ստեղծման համար տվյալ խմբակցությունը համայնքի ղեկավարին գրավոր ներկայացնում է իր կանոնադրությունը, անվանումը, կազմը, ղեկավարի և քարտուղարի անունները, ազգանունները, որը այդ պահին համապատասխան փաթեթով՝ դիմում, կանոնադրություն, ժողովի արձանագրություն, ներկայացրեց նիստը վարողին ավելացնելով՝ էական չէ համայնքի ղեկավար կա թե գործում է պաշտոնակատարը: Շեշտեց, որ եթե կատարվում է օրենքի խախտում ընդունենք, իսկ եթե ոչ արձանագրենք տվյալ փաստը: Փաստաթղթերը ներկա պահին և մինչև համայնքի ղեկավարի թեկնածու առաջադրելը օրենքին համապատասխան, մանդատ ստացած բոլոր կուսակցություններից ներկայացրեցին <<Միասնական Արթիկ>> և <<Քաղաքացիական պայմանագիր>> խմբակցությունները:

Ի պատասխան Ոսկան Վարդանյանի բարձրացված հարցի նիստը վարող Մ. Մկրտչյանը նշեց, թե Ձեր կողմից բարձրացված հարցը կարձանագրենք, իսկ խմբակցությունների ստեղծումը ֆիկսվում է օրենքով և այդ հարցով կզբաղվեն իրավաբանները:

Նիստը վարողից ձայն խնդրեց ավագանու անդամ Արման Աջամօղլյանը նշելով, որ նշված հոդվածում նախատեսված փաստաթղթերը ներկայացվում են համայնքի ղեկավարին, իսկ այս պահին ես հանդիսանում եմ Արթիկ համայնքի ղեկավարի պաշտոնակատարը, սակայն ոչ խոշորացված համայնքի ղեկավար, և ներկա պահին համայնքի ղեկավար մենք դեռևս չունենք:Առարկող Ոսկան Վարդանյանը նիստին վարողին հարց ուղղեց՝ կարող է արդյոք անհատը ինքնաառաջադրվել եթե խմբակցությունը ստեղծված չէ:Նիստը վարողը հարցի վերաբերյալ պարզաբանում խնդրեց նիստերի դահլիճում գտնվող ՀՀ Շիրակի մարզպետարանի ներկայացուցիչ Ռ. Հարությունյանից:Վերջինս պարզաբանեց, որ ավագանին կարող է քվեարկությամբ ֆիկսել խմբակցությունների առկայությունը և առաջարկեց նիստը վարողին այդ հարցը դնել քվեարկության, ինչին հակադարձեց ՀՅԴ-ի կողմից ընտրված համայնքի ավագանու անդամ Հակոբ Մաթիլյանը նշելով, որ հարցի վերաբերյալ կա օրենսդրական բաց, երկու կողմերն էլ ճիշտ են, պարտադիր է Ոսկան Վարդանյանի կողմից ներկայացված փաստաթղթերի փաթեթը, սակայն մյուս կողմից չկա համայնքի ղեկավարը և դա օրենսդրական բաց է, և ավագանու քվեարկությամբ չենք կարող օրենքի բացը լրացնել և բնականաբար քվեարկություն տեղի չունեցավ:

Նիստը վարողը նշեց, որ բոլոր բարձրացված հարցերը կարձանագրվեն և առաջարկեց անցնել օրակարգի հարցերին:

Միաձայն ընդունված 27 կողմ ձայներով, ընդունված որոշմամբ, ստեղծվեց Արթիկ համայնքի առաջին նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողով և հաստատվեց վերջինիս անհատական կազմը՝

Արթուր Աստոյան -<<Ապրելու երկիր>> խմբակցություն

Արման Տոնոյան -<<Ազատական>> խմբակցություն

Լիլիթ Հաջաթյան-<<Հանուն Հանրապետության ԺՊԴ>> խմբակցություն

Ոսկան Վարդանյան- <<Միասնական Արթիկ>> դաշինք խմբակցություն

Գոռ Պետրոսյան- <<Քաղաքացիական պայմանագիր>> խմբակցություն

Այնուհետև ներկայացվեց օրակարգի 2-րդ հարցը ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի ընտրություն:

Ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի կողմից բացատրվեց համայնքի ղեկավարի ընտրության կարգը, որից հետո յուրաքանչյուր խմբակցություն կարող է առաջարկել համայնքի ղեկավարի իրենց թեկնածուն:

Արթիկ համայնքի ղեկավարի թեկնածու առաջարկեցին <<Միասնական Արթիկ>> դաշինք խմբակցությունը, որը առաջարկեց Մխիթար Վարագյանի թեկնածությունը, իսկ <<Քաղաքացիական պայմանագիր>> խմբակցությունը առաջարկեց Անանիկ Ոսկանյանի թեկնածությունը: Մյուս խմբակցությունները թեկնածուներ չառաջադրեցին: Համայնքի ղեկավարի երկու թեկնածուները հանդես եկան ելույթներով և պատասխանեցին առաջադրված հարցերին:

<<Հանուն Հանրապետության ԺՊԴ>> խմբակցության անդամ Արսեն Աբրահամյանը հանդես եկավ հայտարարությամբ, նշելով որ ստեղծված իրադրության մեջ իրենք պաշտպանելու են Անանիկ Ոսկանյանի թեկնածությունը:

Այնուհետև ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի կողմից կազմակերպվեց քվեարկություն, որին մասնակցեցին 27 ավագանու անդամներ, բոլորին դեմ քվեարկեց մեկ ավագանու անդամ, ձեռնպահ քվեարկեցին 2 ավագանու անդամներ, իսկ կողմ քվեարկած ավագանու անդամների ձայները բաշխվեցին հետևյալ կերպ <<Միասնական Արթիկ>> դաշինք խմբակցությունից Մխիթար Նորիկի Վարագյանին կողմ՝ 6, <<Քաղաքացիական պայմանագիր>> խմբակցությունից - Ոսկանյան Անանիկ Ռաֆիկի–կողմ 18: Այսպիսով բաց քվեարկության արդյունքում Արթիկ համայնքի ղեկավար է ընտրվել Անանիկ Ոսկանյանը:

Այնուհետև նիստը վարում է նորընտիր համայնքի ղեկավարը, նա ներկայացրեց օրակարգի 3-րդ հարցը՝

ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի երդման արարողության հետ կապված կազմակերպչական հարցեր:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքի ղեկավարը լիազորություններն ստանձնում է իր ընտրվելուց հետո՝ երրորդ օրացուցային օրը, ավագանու՝ օրենքի ուժով հրավիրված նիստում համայնքի բնակիչներին տրված երդմամբ:

Համայնքի ավագանու անդամներին տեղեկացնում եմ, որ 2021 թվականի դեկտեմբերի 23-ին, ժամը 11^{00}-ին, Արթիկի համայնքապետարանի նիստերի դահլիճում օրենքի ուժով տեղի կունենա համայնքի ավագանու նիստ՝ համայնքի ղեկավարի երդման արարողության վերաբերյալ օրակարգով:

Ավագանու այդ նիստը նույնպես վարելու է ավագանու տարիքով ավագ անդամը:

Որից հետո ներկայացվեց օրակարգի 4-րդ հարցի՝ ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրվա սահմանման մասին, որի ժամանակ նշվեց հետևյալը՝

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի ավագանու նիստի օրերը որոշում է համայնքի ավագանին:

Այնուհետև նիստը վարողը ներկայացրեց ավագանու հերթական նիստի օրվա սահմանման վերաբերյալ հետևյալ որոշման նախագիծը՝

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու արտահերթ նիստի օր և ժամ սահմանել 2021 թվականի դեկտեմբերի 23-ին՝ ժամը 11:00-ին:

Այդ պահին նիստին ներկա ավագանու անդամների կողմ 18, դեմ 0, ձայներով ընդունվեց նշված նախագիծը:

Ավագանու անդամներ

Աստոյան Արթուր
Մաթիլյան Հակոբ
Մուրադյան Արևիկ
Հարությունյան Արտակ
Վարդանյան Նարինա
Տոնոյան Արման
Աբրահամյան Արսեն
Հաջաթյան Լիլիթ
Սահակյան Հովհաննես
Մինասյան Գայանե
Վարագյան Մխիթար
Վարդանյան Ոսկան
Ասատրյան Ժաննա
Հակոբյան Հարություն
Բագդասյան Մարգարիտա

Ոսկանյան Անանիկ
Աջամօղլյան Արման
Սալնազարյան Գայանե
Գևորգյան Հայկ
Աղրամանյան Արմինե
Ղահրամանյան Գևորգ
Գևորգյան Էմիլ
Հովհաննիսյան Վարդուհի
Պետրոսյան Գոռ
Գևորգյան Մանուկ
Պետրոսյան Աստղիկ

ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԸ ՎԱՐՈՂ՝ Մ. Թ. ՄԿՐՏՉՅԱՆ